Սպիտակ համայնք

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Գործառույթը ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ համայնքի ղեկավարը կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության մարզական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝

1) «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
2) «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
3) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
4) Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի № ՆԿ-113-Ն կարգադրություն

Դրույթների անվանումը	**Պահպանված է**	**Թերի է պահպանված**	**Պահպանված չէ**	**Հայտնաբերված խախտումները**	**Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ**	**Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները**
1. Համայնքների բնակչության շրջանում անցկացված ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումների անցկացման վերաբերյալ փաստերի առկայություն:	V					
2. Համայնքի ղեկավարի՝ իր համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, այդ թվում՝ մանկապատանեկան սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման առկայություն, պատշաճ վիճակով սպորտային հրապարակների ու մարզական այլ կառույցների և հանգստի գոտիների, մանուկների ու պատանիների բնակության վայրում, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ապահովում:	V					

3. Հայաստանի Հանրապետության Նախագահի «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն մարզական բակ» մրցանակների համար անցկացվող համանուն ստուգատեսներին ներկայացնելու նպատակով համայնքներում նոր մարզական կառույցների և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների առկայություն:	V					
4. Աջակցություն Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանը (ընտանիքների մարզման համար մարզաբազաների տրամադրում, մրցույթի նախնական և եզրափակիչ փուլերին ընտանիքների փաստացի մասնակցությանն աջակցում):	V					
5. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավասու մարմինների ու հասարակական կազմակերպությունների աջակցությամբ ֆիզկուլտուրային-առողջարարական ու մարզական աշխատանքներ անցկացնելու և առողջ կենսակերպի քարոզչության վերաբերյալ փաստերի առկայություն:	V					